ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2007
ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

«ՀՀ պետական պարտքի 2007թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Հ. Կարապետյանը, Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Շ. Մկրտչյանը, Ս. Խանվելյանը, Ք. Խաչատրյանը, Գ. Վարդապետյանը, Ս. Իսրայելյանը:

Հայաստանի Հանրապետության պետական պարտքը 2007թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 490.5 մլրդ դրամ կամ 1,438.5 մլն ԱՄՆ դոլար:

	31.12.03		30.06.04		31.12.04		30.06.2005		31.12.2005		30.06.2006		31.12.2006		30.06.2007	
	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար
Պետական պարտք	664.4	1,173.9	617.2	1,154.7	621.1	1,278.4	552.9	1,250.0	546.1	1,213.2	540.3	1,290.2	508.9	1,400.1	490.5	1,438.5
այդ թվում՝																
Ներքին պարտք[1]	43.1	76.2	45.0	84.2	46.4	95.5	59.9	135.5	51.3	114.0	55.2	131.8	70.7	194.5	58.9	172.7
Արտաքին պարտք	621.3	1,097.7	572.2	1,070.5	574.7	1,182.9	493.0	1,114.5	494.8	1,099.2	485.1	1,158.4	438.2	1,205.6	431.6	1,265.8

Հաշվարկները կատարված են ելնելով համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքից.

30.12.03 – USD 1 = AMD 566.00
30.06.04 – USD 1 = AMD 534.49
30.12.04 – USD 1 = AMD 485.84
30.06.05 – USD 1 = AMD 442.34
30.12.05 – USD 1 = AMD 450.19
30.06.06 – USD 1 = AMD 418.79
30.12.06 – USD 1 = AMD 363.50
29.06.07 – USD 1 = AMD 340.95

[1] 2006թ. ներքին պետական պարտքի մեջ ներառված է ՀՀ ԿԲ վերակապիտալացման նպատակով տրամադրված պետական պարտատոմսերը՝ 12.7 մլրդ դրամ

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Օգտագործված հապավումներ

ՆՊՊ-ներքին պետական պարտք

ՊՊ- պետական պարտատոմսեր

ՊԿՊ-պետական կարճաժամկետ պարտատոմսեր

ՄԺՊ-միջին ժամկետայնության պատատոմսեր

ԵՊ-երկարաժամկետ պարտատոմսեր

ԽԱՊ-խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր

ԳՊ-Գանձապետական պահառու

2007 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 58,876.04 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսեր՝ 3,794.02 մլն. դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսեր՝ 41,113.53 մլն. դրամ, երկարաժամկետ պարտատոմսեր՝ 13,794.05 մլն. դրամ և խնայողական պարտատոմսեր՝ 174.43 մլն. դրամ
- պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը կազմել է 1,501.80 մլն. դրամ,
- ներքին պետական պարտքի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7.2870 %,
- ներքին պետական պարտքի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1468 օր (ՊԿՊ-եր՝ 183 օր, ՄԺՊ-եր՝ 835 օր, ԵՊ-եր՝ 3725օր և ԽԱՊ-եր՝ 124 օր):

Աղյուսակ 1

2007 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները

(մլն դրամ)

	30.06.2006թ.	31.12.2006թ.	30.06.2007թ.
Ներքին պետական պարտքը (մլն. դրամ), որից՝	**55,219.77**	**51,347.50**	**58,876.04**
կարճաժամկետ պարտատոմսեր (մլն. դրամ)	7,167.10	6,500.00	3,794.02
միջին ժամկետ. պարտատոմսեր (մլն. դրամ)	37,844.37	36,487.50	41,113.53
երկարաժամկետ պարտատոմսեր (մլն. դրամ)	10,208.30	8.360.00	13,794.05
խնայողական պարտատոմսեր (մլն. դրամ)	-	-	174.43
ՆՊՊ-ի ժամկետայնություն (օր), որից՝	**1222**	**1100**	**1468**
կարճաժամկետ պարտատոմսեր (օր)	150	190	183
միջին ժամկետ. պարտատոմսեր (օր)	705	721	835
երկարաժամկետ պարտատոմսեր (օր)	3889	3456	3725
խնայողական պարտատոմսեր (օր)	-	-	124
ՆՊՊ-ի եկամտաբերությունը (%) որից՝	**7.0043**	**7.3085**	**7.2870**
կարճաժամկետ պարտատոմսեր (%)	4.1613	3.8002	5.7213

միջին ժամկետ. պարտատոմսեր (%)	7.1578	7.7077	7.0214
երկարաժամկետ պարտատոմսեր (%)	8.4316	8.2936	8.5161
խնայողական պարտատոմսեր (%)	-	-	6.7202

Գծապատկեր 1

2007թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2007 թվականի առաջին կիսամյակում տեղի է ունեցել ՊՊ-ի 12 թողարկում, որից 3-ը՝ ՊԿՊ-ի, 7-ը՝ ՄԺՊ-ի, 2-ը՝ ԵՊ-ի: Թողարկումների ընդհանուր ծավալը կազմել է 18.5 մլրդ. դրամ, որն ամբողջությամբ տեղաբաշխվել է: 2007 թվականի I կիսամյակում առաջին անգամ թողարկվել են խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք ոչ շուկայական (ոչ շրջանառելի) պարտատոմսեր են և տեղաբաշխվում են գանձապետական պահառու համակարգի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել ԽԱՊ-երի 8 թողարկում՝ 550.0 մլն. դրամ ծավալով, որից տեղաբաշխվել է 174.4 մլն. դրամը: Պետական պարտատոմսերի 19.05 մլրդ դրամ ընդհանուր թողարկման ծավալում ՊԿՊ-ը կազմել են 3.0 մլրդ. դրամ (15.7%), ՄԺՊ-ը՝ 12.5 մլրդ. դրամ (65.6%), ԵՊ-ը՝ 3.0 մլրդ. դրամ (15.7%) իսկ ԽԱՊ-ը 0.55 մլրդ. դրամ (3%): ՊԿՊ-ի մեկ թողարկման միջին ծավալը կազմել է 1.0 մլրդ. դրամ, ՄԺՊ-ինը՝ 1.8 մլրդ. դրամ, ԵՊ-ինը՝ 1.5 մլրդ դրամ, ԽԱՊ-ինը՝ 68.8 մլն. դրամ: Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը թողարկման ծավալը գերազանցել է 2.27 անգամ և կազմել 41.98 մլրդ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1350 օր, միջին կշռված եկամտաբերությունը՝ 6.75% (տե՛ս աղ. 2): Թողարկման առավելագույն ժամկետայնությունը եղել է 8 տարի, նվազագույնը՝ 39 շաբաթ:

Աղյուսակ 2

2007 թ. առաջին կիսամյակում պետական պարտատոմսերի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Հունվար	5.6600	7.2559	6.7371	1095
Փետրվար	5.7500	7.1600	6.6785	1339
Մարտ	5.9000	8.0400	7.1947	1781

	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Ապրիլ	6.9000	7.1899	6.8380	1031
Մայիս	5.7500	7.0000	6.6460	1308
Հունիս	5.9000	6.8800	6.3638	1599
I կիսամյակ	**5.6600**	**8.0400**	**6.7456**	**1350**

Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի 97.33%-ը (40,858.2 մլն դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, 2.67%-ը (1,122.3 մլն դրամ)՝ ներդրողների հաշվին (որից ԳՊ-ն՝ 0.71%):

Աղյուսակ 3

2007թ. առաջին կիսամյակում շուկայի մասնակիցների ձեռք բերած ՊՊ-երի տեսակարար կշիռները տեղաբաշխման ծավալի մեջ

(տոկոսներով)

	Գործակալներ	Դիլերներ	ԳՊ	Ընդամենը
Հունվար	50.85	45.81	3.33	100.00
Փետրվար	46.06	50.61	3.33	100.00
Մարտ	68.64	31.36	-	100.00
Ապրիլ	63.38	36.62	-	100.00
Մայիս	63.41	33.26	3.33	100.00
Հունիս	79.10	20.90	-	100.00
I կիսամյակ	**61.95**	**36.43**	**1.62**	**100.00**

Գծապատկեր 2

Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների կառուցվածքը 2007 թ. հունիսի 30-ի դրությամբ



Ներդրողների կառուցվածքում 2006թ-ի տարեվերջի համեմատ նվազել է ոչ բանկ ռեզիդենտ ներդրողների տեսակարար կշիռը՝ հասնելով 4.38%-ի (29.12.2006թ-ի դրությամբ՝ 5.01%), իսկ ոչ ռեզիդենտ ներդրողների կշիռը փոփոխություն չի կրել (նրանց կշիռը 0% է, բացարձակ մեծությամբ՝ ընդամենը 130,000 դրամ ծավալով պարտատոմս):

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2007թ. առաջին կիսամյակի ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել է 504 գործարք
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 44,337.8մլն. դրամ, որից՝
  1. Ընդամենը ՊԿՊ՝ 2,607.5 մլն. դրամ
  2. Ընդամենը ՄԺՊ՝ 26,550.5 մլն. դրամ
  3. Ընդամենը ԵՊ՝ 15,179.9 մլն. դրամ
- ԿԲ-ի կողմից գործարք չի կատարվել
- Միջին կշռված եկամտաբերությունը՝ 6.69%
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 2003 օր
- Միջին օրական ծավալը՝ 363.4 մլն. դրամ
- Գործարքների միջին օրական քանակը՝ 4:

Գծապատկեր 3

2007 թ. առաջին կիսամյակում կատարված գործարքների ծավալներն և եկամտաբերությունն ըստ ամիսների



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
ծավալ (մլն.դրամ)	6,568.7	4,514.7	7,672.7	8,735.1	6,433.1	10,413.6
միջ.կշռ. եկամտ.(%)	6.2815	6.1923	7.1174	6.6959	6.3377	7.0572

Գծապատկեր 4

2007 թ. առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործառնություններն ըստ ժամկետայնության



	1-91 օր	92-182օր	183-364 օր	1-3 տարի	3-4 տարի	4-5 տարի	5 և ավել տարի
գործ. ծավալ (մլն.դրամ)	1,329	287	4,126	5,906	8,162	9,329	15,200
եկամտ. (%)	4.00	5.21	5.60	5.53	6.25	6.74	7.90

Գծապատկեր 5

Կատարված գործարքների մեջ ՊԿՊ-ների, ՄԺՊ-ների և ԵՊ-ների տեսակարար կշիռը



Գծապատկեր 6

2007 թ. առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործարքների եկամտաբերության և ժամկետայնության փոխադարձ կապը



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2007թ. առաջին կիսամյակում Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված բոլոր 11 թողարկումներին, որից 3-ը եղել են ՊԿՊ-երի, իսկ 8-ը ԽԱՊ-երի թողարկումներ,
- ներդրման ծավալը կազմել է 474.4 մլն դրամ, որից 300 մլն ՊԿՊ-եր և 174.4 մլն ԽԱՊ-եր,
- մարվել է միայն ՊԿՊ-եր՝ 820.4 մլն. դրամ ծավալով,
- թողարկված ՊԿՊ-երի 10% ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով (ԳՊ-ի ձեռք բերման առավելագույն ծավալը սահմանվել է թողարկման ծավալի 10%-ի չափով),
- 2007թ. հունիսի 30-ի դրությամբ ընդամենը շրջանառության մեջ է եղել 624.4 մլն. դրամի պարտատոմս, որից 450 մլն ՊԿՊ-եր և 174.4 մլն ԽԱՊ-եր (տես գծ. 7),

Գծապատկեր 7

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2007թ. հունիսի 30-ի դրությամբ

(հազար դրամ)



- դեպո հաշիվների քանակը կազմել է 715, որոնցից 26-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում (տես գծ. 8),

Գծապատկեր 8

Դեպո հաշիվների դինամիկան 2007թ. առաջին կիսամյակի ընթացքում



	Հունվար-07	Փետրվար-07	Մարտ-07	Ապրիլ-07	Մայիս-07	Հունիս-07
Դեպո հաշիվների քանակը	697	704	709	710	712	715

- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 157 օր, որտեղ ՊԿՊ-երի համար այն կազմել է 170 օր, իսկ ԽԱՊ-երի համար՝ 124,
- մեկ ներդրողի կողմից ներդրման միջին ծավալը կազմել է 11 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն եղել է 37.5 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 4.8 մլն դրամ,
- ներկայացված հայտերում ներդրման միջին ծավալը կազմել է 8.3 մլն. դրամ, որտեղ ՊԿՊ-երի գծով այն եղել է 33.3 մլն դրամ, իսկ ԽԱՊ-երի գծով՝ 3.6 մլն դրամ,

Աղյուսակ 4

ԳՊ-ի կողմից 2007թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ՊԿՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
1-13 շաբաթ	297.5	2.5	300	-	-	-	-
27-39 շաբաթ	287.8	10.2	298	100	33.3	1	100
40-52 շաբաթ	212.8	9.6	222.4	200	66.7	2	100
Ընդամենը	798.1	22.3	820.4	300	100	3	100

Աղյուսակ 5

ԳՊ-ի կողմից 2007թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ԽԱՊ-երով կատարված գործառնությունները

(մլն դրամ)

Ժամկետը	Մարում	Արժեկտրոնի սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Թողարկումների քանակը	Մեկ թողարկման ներդրման միջին ծավալը
Մինչև 1 տարի	-	2.4	2.4	158.5	90.9	5	31.7
1 - 2 տարի	-	0.2	0.2	15.9	9.1	3	5.3
Ընդամենը	-	2.6	2.6	174.4	100	8	21.8

Գծապատկեր 9

ԳՊ-ի միջոցով շրջանառության մեջ եղած պարտատոմսերի կշիռը 2007թ. հունիսի 30-ի դրությամբ



ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2007 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,265.8 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝

- ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները՝ 1,107.5 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 87.5%),
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 158.3 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 12.5%):

2006 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի ծավալը աճել է 5.0 տոկոսով կամ 60.2 մլն ԱՄՆ դոլարով: Նշված փաստը պայմանավորված է եղել ինչպես 2007թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարված գործառնություններով, այնպես էլ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ արտաքին պետական պարտքի զամբյուղը ներկայացնող հիմնական արտարժույթների փոխարժեքների փոփոխությամբ[1]:

Գծապատկեր 10

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի

2007թ. հունիսի 30-ի դրությամբ



2007 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

[1] 31.12.2006թ. դրությամբ 1 SDR=1.5044 USD, 1 EUR =1.317 USD
30.06.2007թ. դրությամբ 1 SDR=1.51557 USD, 1 EUR =1.3505 USD

Աղյուսակ 8

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2007թ. առաջին կիսամյակի ընթացքում

(մլն ԱՄՆ դոլար)

	Ստացում	Սպասարկում		
		ընդամենը	այդ թվում	
			մարում	տոկոսավճար
Ընդամենը	**72.078**	**27.265**	**22.007**	**5.258**
այդ թվում՝				
I. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**65.542**	**13.900**	**9.069**	**4.831**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	*62.456*	*11.861*	*7.903*	*3.957*
ա) Համաշխարհային Բանկ	57.982	7.320	3.799	3.521
որից՝				
Զարգացման Միջազգային Ընկերակցություն	57.982	6.812	3.444	3.368
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ	-	0.509	0.356	0.153
բ) Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	1.236	0.321	0.134	0.187
գ) Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) Միջազգային Զարգացման Հիմնադրամ	3.239	0.026	-	0.026
դ) Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	-	4.193	3.970	0.223
2. Օտարերկրյա պետություններ	*3.086*	*2.039*	*1.165*	*0.874*
ա) ԱՄՆ	-	1.632	1.151	0.481
բ) Գերմանիա (KfW)	2.823	0.362	-	0.362
գ) Ֆրանսիա	-	0.032	0.015	0.017
դ) Ճապոնիա	0.262	0.013	-	0.013
II. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**6.535**	**13.365**	**12.938**	**0.427**
որից՝				
1. Միջազգային կազմակերպություններ	*5.113*	*13.343*	*12.938*	*0.405*
ա) Արժույթի Միջազգային Հիմնադրամ	5.113	13.343	12.938	0.405
2. Օտարերկրյա պետություններ	*1.423*	*0.022*	*-*	*0.022*
ա) Գերմանիա (KfW)	1.423	0.022	-	0.022

2007թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում արտոնյալ վարկերի տեսակարար կշիռը կազմել է 99.3%:

2007թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների 88.9%-ը կազմել են միջազգային կազմակերպություններից ստացված վարկային միջոցները, իսկ մնացած 11.1%-ը՝ օտարերկրյա պետությունների կողմից տրամադրված վարկերը (տես գծապատկեր):

ՀՀ վարկատուների կառուցվածքը 2007թ. հունիսի 30-ի դրությամբ



2007թ. առաջին կիսամյակի ընթացքում ստորագրվել են հինգ նոր վարկային համաձայնագրեր.

- **Աղքատության հաղթահարման աջակցության երրորդ վարկային ծրագիր** (վարկատու՝ Միջազգային Զարգացման Գործակալություն, վարկառու՝ ՀՀ կառավարություն): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ 18.7 մլն SDR,
- **Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագիր** (վարկատու՝ Միջազգային Զարգացման Գործակալություն, վարկառու՝ ՀՀ կառավարություն): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ 14.8 մլն SDR,
- **Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագիր** (վարկատու՝ Միջազգային Զարգացման Գործակալություն, վարկառու՝ ՀՀ կառավարություն): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ 15.2 մլն SDR,
- **Սևանա լճի բնապահպանական ծրագիր** (վարկատու՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ, վարկառու՝ ՀՀ կառավարություն): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ 7.0 մլն EUR,
- **Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման վարկային ծրագիր** (վարկատու՝ ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ, վարկառու՝ ՀՀ կառավարություն): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ 10.0 մլն USD: